Հայ Փոստ
Հայաստանի Փոստ

#քոմարդիկամենուր

Ել. – ՀՓ 2013-2026
«06» հունիսի 2026թ.
ք. Երևան

«ԱՄՈՒՐԱ» ՍՊԸ-Ի ՏՆՕՐԵՆ
Լ. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆԻՆ
(Հասցե՝ Ավան, 2-րդ միկր, 2/10
Հեռախոս՝ (+374) 33844886
Էլ.հասցե՝ amura.tender@mail.ru)

ԾԱՆՈՒՑՈՒՄ
Պայմանագիրը միակողմանի լուծելու մասին

Համաձայն 2026 թվականի մայիսի 26-ին «Հայփոստ» ՓԲԸ-ի (այսուհետ՝ Գնորդ) և «Ամուրա» ՍՊԸ-ի (այսուհետ՝ Վաճառող) միջև կնքված «Հայփոստ» ՓԲԸ-ի կարիքների համար ապրանքի մատակարարման թիվ «**ՀՓ-ԷԱՃԱՊՁԲ-26/49-1**» ծածկագրով գնման պայմանագրի՝ (այսուհետ՝ Պայմանագիր) Վաճառողը պարտավորվել է մատակարարել պայմանագրով նախատեսված ապրանքները մինչև 2026 թվականի մայիսի 31-ը:

Գնորդի կողմից Պայմանագրով պատվիրատուին վերապահված իրավունքների և պարտականությունների իրականացման արդյունքում պարզվել է, որ Վաճառողի կողմից չեն պահպանվել Պայմանագրի պահանջները, մասնավորապես՝ Պայմանագրով սահմանված ապրանքների մատակարարումը չի իրականացվել Պայմանագրի Հավելված N 2-ով (մատակարարման ժամանակացույց) սահմանված ապրանքի մատակարարման ժամանակացույցին համապատասխան:

«Հայփոստ» ՓԲԸ
ՀՀ, 0061, Երևան, Արշակունյաց 65/5
+374 10 514 514
info@haypost.am
www.haypost.am

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի (այսուհետ՝ Օրենսքիրք) 408-րդ հոդվածի համաձայն՝ պարտավորության խախտում է համարվում այն չկատարելը կամ անպատշաճ (կետանցով ապրանքների, աշխատանքների և ծառայությունների թերություններով կամ պարտավորության բովանդակությամբ որոշվող այլ պայմանների խախտմամբ) կատարելը:

Պայմանագրի 2.1.7 կետի համաձայն՝ Գնորդն իրավունք ունի միակողմանի լուծել պայմանագիրը, եթե Վաճառողն էականորեն խախտել է պայմանագիրը: 2.1.7.1 *Վաճառողի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե՝*

բ) ապրանքի մատակարարման ժամկետները խախտվել են 10 օրից ավելի:

Հիմք ընդունելով վերոգրյալը և ղեկավարվելով վերը նշված իրավական հիմքերով՝ Գնորդը միակողմանի ամբողջությամբ լուծում է պայմանագիրը՝ պատշաճ ծանուցումն ապահովելու նպատակով կիրառելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի N 526-Ն որոշմամբ հաստատված N 1 Հավելվածի 33-րդ կետի 17-րդ ենթակետով սահմանված դրույթները:

Պայմանագրի 8.11 կետով սահմանված է, որ Վաճառողի կողմից ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը Գնորդը հրապարակում է www.gnumner.am (www.procurement.am) հասցեով գործող ինտերնետային կայքի «Պայմանագրերը միակողմանի լուծելու մասին ծանուցումներ» բաժնում՝ նշելով հրապարակման ամսաթիվը: Վաճառողը պայմանագիրը միակողմանի լուծելու վերաբերյալ, համարվում է պատշաճ ծանուցված՝ ծանուցումը սույն կետով սահմանված կարգով հրապարակվելուն հաջորդող օրվանից:

Պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը տեղեկագրում հրապարակվելու օրը Գնորդը այն ուղարկվում է նաև Վաճառողի էլեկտրոնային փոստին:

«Գնումների մասին» օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի համաձայն՝ մասնակիցն ընդգրկվում է գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում, եթե խախտել է պայմանագրով նախատեսված կամ գնման

գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը կամ գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը և մասնակիցը հրավերով և (կամ) պայմանագրով սահմանված ժամկետում չի վճարել պայմանագրի և (կամ) որակավորման ապահովման գումարը:

«Գնումների մասին» օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետով նախատեսված հիմքերն ի հայտ գալու դեպքում պատվիրատուի ղեկավարի պատճառաբանված որոշման հիման վրա լիազորած մարմինը մասնակցին ներառում է գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում:

Տեղեկացնում ենք, որ եթե լիազորված մարմնին որոշումը ներկայացվելու վերջնաժամկետը լրանալու օրվա դրությամբ մասնակիցը կամ պայմանագիրը կնքած անձը վճարում է պայմանագրի և (կամ) որակավորման ապահովման գումարը, ապա պատվիրատուն տվյալ մասնակցին ցուցակում ներառելու պատճառաբանված որոշումը չի ներկայացնում լիազորված մարմին:

Հաշվի առնելով վերոգրյալը՝ տեղեկացնում ենք, որ Պայմանագրի միակողմանի լուծման արդյունքում Պայմանագրի որակավորման ապահովման գումարը կազմում է 684.000 (վեց հարյուր ութսունչորս հազար) ՀՀ դրամ՝ համաձայն Հրավերի 10.2 կետի, և պայմանագրի ապահովման գումարը կազմում է 456.000 (չորս հարյուր հիսունվեց հազար) ՀՀ դրամ՝ համաձայն Հրավերի 10.3 կետի, որոնք անհրաժեշտ է փոխանցել «Հայփոստ» ՓԲԸ-ի կողմից «Կոնվերս Բանկ» ՓԲԸ-ում բացված **«1930003703150100»** հաշվեհամարին:

Վերոգրյալից ելնելով՝ առաջարկում ենք **N «ՀՓ-ԷԱՃԱՊՁԲ-26/49-1»** ծածկագրով գնման պայմանագրի որակավորման և պայմանագրի ապահովումները գնումների մասին ՀՀ օրենսդրությամբ սահմանված ժամկետում ամբողջությամբ վճարվելու դեպքում, այդ մասին գրավոր տեղեկացնել Պատվիրատուին՝ կցելով վճարումը հավաստող փաստաթղթերը (անդորրագրերը):

Տեղեկացնում ենք, որ եթե վճարման ենթակա գումարները փոխանցվեն Պատվիրատուի կողմից բացված հաշվեհամարին, ապա Ընկերության նկատմամբ չեն

կիրառվի «Գնումների մասին» օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետով և 2-րդ մասով նախատեսված դրույթները:

Սույն ծանուցումը www.gnumner.am (www.procurement.am) կայքում հրապարակելու և amura.tender@mail.ru էլ. փոստին ծանուցելու հաջորդող օրվանից N **«ՀՓ-ԷԱՃԱՊՁԲ-26/49-1»** ծածկագրով գնման պայմանագիրը համարվում է լուծված:

«ՀԱՅՓՈՍՏ» ՓԲԸ-Ի
ԳԼԽԱՎՈՐ ԳՈՐԾԱԴԻՐ ՏՆՕՐԵՆ՝ **ՇՈՒՇԱՆ ԱԼԵՔՍԱՆՅԱՆ**